ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/279

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Մասնակից՝ «Դավտիգաշ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/49» ծածկագրով գնանշման հարցում, համազգեստի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18728-2020 գրությամբ «Դավտիգաշ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 10.12.2020թ.-ի թիվ 1/18-2/77720-2020 գրության հիման վրա, 15.12.2020թ.-ին «Դավտիգաշ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 15.12.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 16.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/279 համարի ծածկագիրը:

24.12.2020թ.-ին և 14.01.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 24.12.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 14.01.2021թ.-ին:

2. **<u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 10.12.2020թ.-ի թիվ 1/18-2/77720-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/49 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Դավտիգաշ» ՍՊԸ-ն 6-րդ, 9-10-րդ, 25-28-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից, սակայն գրությամբ (կցվում է) հրաժարվել է պայմանագիրը կնքելուց:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/49» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Դավտիգաշ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. **<u>«Դավտիգաշ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 16.12.2020թ.-ին գրությամբ դիմել է «Դավտիգաշ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.12.2020թ.-ի թիվ

26/26-1/18728-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. **ՍՑ-LO**-2020/279 **ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից համազգեստի ձեռքբերման նպատակով 18.11.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/49» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ),

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 6-րդ, 9-10-րդ, 25-28-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Դավտիգաշ» ՍՊԸ-ն:

iii. «Դավտիգաշ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/49» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 27.11.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 6-րդ, 9-10-րդ, 25-28-րդ չափաբաժինների մասով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Դավտիգաշ» ՍՊԸ-ն:

v. 03.12.2020թ.-ին «Դավտիգաշ» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ Ընկերությունը «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/49» մրցույթում հաղթող է ճանաչվել և գործող օրենքի համաձայն պետք է ներկայացնի որակավորման ապահովում, քանի որ պայմանագրի գումարը գերազանցում է 10.000.000 դրամը, սակայն բանկը հրաժարվում է տրամադրել որակավորման ապահովում պատճառաբանելով, որ նորաստեղծ ընկերություն է: Ելնելով վերոգրյալից «Դավտիգաշ» ՍՊԸ-ն հրաժարվում է ստորագրելու ներկայացված պայմանագիրը և խնդրում գործել ըստ գործող օրենքի:

vi. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 03.12.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը հիմք ընդունելով «Դավտիգաշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունը, որոշել է 6-րդ, 9-10-րդ, 25-28-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18728-2020 գրությամբ «Դավտիգաշ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը հայտերը բացելուց հետո հրաժարվում է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից համազգեստի ձեռքբերման նպատակով 18.11.2020թ.-ին հայտարարված «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/49» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Դավտիգաշ» ՍՊԸ-ն 03.12.2020թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, Ընկերությունը «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/49» մրցույթում հաղթող է ճանաչվել և գործող օրենքի համաձայն պետք է ներկայացնի որակավորման ապահովում, քանի որ պայմանագրի գումարը գերազանցում է 10.000.000 դրամը, սակայն բանկը հրաժարվում է տրամադրել որակավորման ապահովում պատճառաբանելով, որ նորաստեղծ ընկերություն է:

Ելնելով վերոգրյալից «Դավտիգաշ» ՍՊԸ-ն հրաժարվել է ստորագրելու ներկայացված պայմանագիրը և խնդրել գնահատող հանձնաժողովին գործել ըստ գործող օրենքի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Դավտիգաշ» ՍՊԸ-ի վերոնշյալ գրությունը որոշել է ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Դավտիգաշ» ՍՊԸ-ն Հանձնաժողովին ուղղված գրությամբ, հայտերը բացելուց հետո, հրաժարվելով «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/49» ծածկագրով գնման գործընթացի հետագա մասնակցությունից, ըստ էության, հրաժարվել է ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելուց:

Ուստի, նման պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18728-2020 գրությամբ «Դավտիգաշ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/279 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Դավտիգաշ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**